Եւ Բշի (30 Ապրէլ) առաւօտուս ելեալ գնացաք ի խանութ և նստեալ էաք մինչև Գ ժամ աւուրս, և լսաք զձայն աղաղակի մեծի երթևեկելոյ արանց, զի ոմանք յայս կոյս և յայն ընթանային և ոմանք ի տունս իւրեանց մտեալ փախչէին, և մեք գողալով՝ փակեալ զխանութս և ի տունս մեր աճապարեցաք փախչելով[1]։ Եւ իմացեալ մեր սակաւուց զիսկն զիտելոյ, այս էր որ ծառայք թագաւորին՝ սպահի և եէնկիչէրին ուխտ եդեալ ընդ միմեանս դաշնաբար մինչև ի մահ, զոր ինչ կամին՝ զայն առնեն։ Բայց այս ոչ եղև ընդ մեծամեծս յեէնկիչէրուն, այլ փոքունցն և նուաստիցն։ Բայց գլուխ բանիս էր Մուրատ փաշան, որ էր զապուտան՝ այր ներքնագործ, և գլուխ սպահուն Բիւրա Մէհէմէտ աղան՝ աւագակապետ՝ ընդ Իփշիրին եկեալ. և այլք ծածկաբար ի ներքուստ կամ յայլուստ, որք ունէին ոխ ընդ վէզիրն, զայս գործեցին։ Եւ միաբանեալ սոցա յերկոցունց ծառայիցն և գնացեալ ի դուռ վէզիրին թէ Հրաման տո՛ւր զի սպանցուք զսարուճայքն. ոմանք զայս գնելով պատճառ և ոմանք երես առ երես լրբաբար կանչ և ճիչ առնէին թէ Զմեզ ի տեղս բերեր և ոչ տաս մեզ խրզմէթ. ե՛կ երթիցուք ի դատաստան ընդ քեզ. և նորա ասացեալ թէ Համբերեցէք սակաւ։ Եւ ոչ համբերեալ սոցա՝ դիմեցեալք երթալ ի վեր, և սպասաւորք վէզիրին ի վերէն ոչ ժուժեն զայն տեսնելով, նեռ ձգեն սոցա փախուցանելով զնոսա. և նոքա փութանակի ի դուրս վազեալ գնացին իւրաքանչիւր տեղիս և տունս և յօտայս, զինեցան ամենեքեան միաբան գունդ գունդ՝ մեծ ամբոխ արարեալ գնացին ի դուռս վէզիրին թէ Գայցէ և երթիցեմք ի դատաստան։ Եւ նա յառաջագոյն թաքեալ էր գնալով ի պալատն արքունի, յուսալով ի թագա-

1) փաղչելով.